ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. Մարտնչող Արցախը. 1917–2000. գիրք Ա. 1917–1923. *Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, 338 էջ:*

Վերջերս լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» մենագրության առաջին մասը, որտեղ արխիվային հարուստ փաստերի, մամուլի և գրականության պատմագիտական հետազոտությունների հիման վրա լուսաբանվել է 1917–1923 թթ. թուրք-ազերիների բռնատիրության դեմ արցախահայության մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը: Մենք լավ ենք ճանաչում գրքի հեղինակին, որի գրչին են պատկանում Արցախ-Ղարաբաղի պատմությանը վերաբերող ավելի քան 10 մենագրություններ և 100-ից ավելի գիտական հոդվածներ: 72-ամյա գիտնականը իր ամբողջ կյանքը նվիրել է Արցախ-Ղարաբաղի նորադույն պատմության ուսումնասիրությանը՝ ըստ արժանվույն գնահատելով այդ բնագավառում հայ պատմաբանների մինչ այդ կատարած շնորհկալ աշխատանքը և ընթերցող հասարակության դատին հանձնել մեծ հետաքրքրությամբ կարդացվող մի աշխատություն, որտեղ Արցախ-Ղարաբաղի 1917–1923 թթ. բարդ ու ողբերգական պատմությունը ուսումնասիրվել է ոչ թե հպանցիկ, այլ՝ խորությամբ:

Ակնհայտ է, որ Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը մեր օրերում դարձել է համաշխարհային չափանիշներով ազգամիջյան բարդ խնդիր: Բարդ է, որովհետև Արցախը հերոսական պայքարի է ելել թուրք-ազերիների բռնատիրության դեմ, բարդ է, որովհետև XX դ. ութսունական թվականների վերջերին, երբ արցախցիները փորձեցին սահմանադրական, խաղաղ ուղիով իրենց մարզը միավորել մայր Հայաստանի հետ, Ադրբեջանի պարագլուխները դրան պատասխանեցին ադրբեջանահայության կոտորածներով ու ջարդերով: Ելնելով նրանից, որ հակառակորդը նպատակադրվել է Արցախի հիմնահարցը լուծել զենքի ուժով, պնդելով, թե իբրև Լեռնային Ղարաբաղը ադրբեջանական տարածք է, այդ այն դեպքում, երբ Արցախը երբեք չի եղել Ադրբեջանի տարածք, ներկայումս սուր, քաղաքականապես հրատապ, կենսականորեն անհրաժեշտ խնդիր է դարձել 1917–1923 թթ. ղարաբաղյան խնդրի ծագման ու վերջնական ձևավորման պատմության ուսումնասիրումը: Հեղինակն իր մենագրության ներածական մասում և հինգ գլուխներում արխիվային նյութերի հիման վրա վերլուծել է հետևյալ հարցերը՝ 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած փոթորկալից իրադարձություններից հետո արցախահայության պայքարի առաջին քայլերն ու հետևանքները, Արցախ-Ղարաբաղի բնակչության, քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների դերը հայրենի երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու գործում, թուրք զավթիչների և մուսավաթական հրոսակների դեմ արցախահայության մղած հերոսական պայքարը, զորավար Անդրանիկի դերը Արցախի ուժերը համախմբելու և Արցախի ու Զանգեզուրի ռազմաքաղաքական և տնտեսական կապերն ամրապնդելու գործում, օտար տերությունների, մանավանդ անգլիական դաղութարարների, քաղաքականությունը Արցախ-Ղարաբաղի նկատմամբ և թուրք ազգայնամոլների կողմից այդ քաղաքականության նպատակամղումը Արցախը Ադրբեջանին բռնակցելու համար, Արցախի վերամիավորումը Հայաստանին 1920 թ. ապրիլին և դրա պատմական դերը, Կարմիր բանակի՝ Արցախ ներխուժելուց հետո այստեղ լայնորեն իրագործված բռնությունները և դրա դեմ 1920–1921 թթ. Թևան Ատեփանյանի գլխավորությամբ տեղի ունեցած ժողովրդական ապստամբությունը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ստեղծումը որպես ադրբեջանական իշխանությունների հակահայկական գործողութ-

յան առաջին փուլի ավարտը և այլն: Այդ բոլորը կազմում են մի ամբողջականություն՝ պայքար ինքնորոշման և մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար:

Հեղինակն օգտագործելով պատմական երևույթների, դեպքերի ու դեմքերի ճիշտ գնահատելու պատմաքննական մեթոդը, որի հիմքում դրվել է իրողությունների անկողմնակալ վերլուծությունը, կարողացել է այդ ամենը լրացնել անժխտելի փաստերով: Նա միանգամայն ճիշտ է, երբ 1917–1923 թթ. արցախահայության մղած պայքարի ձևերն ու մեթոդները, ստեղծված ժողովրդական մարմինների գործունեության յուրահատկությունը, երկրամասի բնակչության վճռականությունն ու նվիրվածությունը, ինչպես նաև թույլ տված սխալներն ու բացերը, որոնք այն ժամանակ հանգեցրին արցախահայության համար ոչ ցանկալի հետևանքների, դաս են ներկայումս իր նպատակին հասնելու համար աննահանջ պայքարող արցախահայության, ինչպես և ողջ հայության համար:

Հրանտ Աբրահամյանի մենագրության մեջ համալիր փաստերով հագեցված է 1917–1923 թթ. Ղարաբաղի հիմնահարցի ակունքների պարզաբանումը, որը հետագայում խորհրդային իշխանության տարիներին ավելի սրվեց և վերածվեց ազգամիջյան հարաբերությունների բարդ խնդիրներից մեկի: Հեղինակը, քայլ առ քայլ առաջ գնալով, բացում է դեռևս անհայտ շատ էջեր ու ծալքեր: Թերևս դրանցից թվարկենք մի քանիսը: 1917–1920 թթ. Արցախում գործում էին դաշնակցական, էսեռական, մենշևիկյան, բոլշևիկյան և կադետական քաղաքական կուսակցությունները, որոնք, մոռանալով իրենց ներքին հակասությունները, միասնական էին երկրամասը պաշտպանելու և Հայաստանի հետ միավորելու հարցում: Միայն 1920-ի գարնանը Ղարաբաղի բոլշևիկները նահանջեցին այդ սկզբունքից, որին հաջորդեց թուրք-ազերիների կողմից Շուշիի գրավումն ու ավերումը: Հեղինակն այն միտքն է զարգացնում, որ քաղաքական ուժերի համար հայրենիքի պաշտպանությունը պետք է վեր լինի կուսակցական և անձնական շահերից: Դրա մեջ մենք տեսնում ենք այժմեականության պահանջը և հրամայականը:

Կամ ուրիշ հարց: 1918 թ. հուլիսից մինչև 1920 թ. մայիսի վերջը Արցախում տեղի է ունեցել Ղարաբաղի հայության 10 համագումար: Չնայած հեղինակը տասնամյակներ առաջ իր մի հոդվածում խոսել է այդ համագումարների մասին, սակայն այստեղ միանգամայն նոր մոտեցում է ցուցաբերել և նոր մեկնաբանություն դրան տվել: Երկու տարի երկրամասը ղեկավարել են համագումարները, որը նորույթ է: Համագումարներն իրագործել են օրենսդիր և գործադիր ֆունկցիաներ և երկրամասի հետ առնչվող բոլոր հարցերը լուծվել են դրանց որոշումներով: Այդ համագումարներին ակտիվորեն մասնակցել են քաղաքական կուսակցությունները, հասարակական ուժերը: Համագումարները երբ էլ անդրադարձել են Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցին, միշտ էլ դրական որոշում են ընդունել: Թերևս Անդրկովկասում և ուրիշ որևէ տեղ չի եղել նման օրինակ, երբ մի ամբողջ երկրամաս ղեկավարվեր համագումարների միջոցով: Հեղինակը վիճաբանելով հայ և ազերի մի շարք պատմաբանների հետ, առանձին էջեր է հատկացրել VII համագումարին, որը տեղի է ունեցել 1918 թ. օգոստոսին: Ելնելով երկրամասի համար ստեղծված ծանր վիճակից, համագումարը որոշել է ժամանակավոր, մինչև Փարիզի վեհաժողովի վերջնական որոշումը, մնալ Ադրբեջանի սահմաններում, այլ ոչ թե նրա կազմում, ինչպես ընդունել են ազերի և հայ որոշ պատմաբաններ:

Մեկ ուրիշ հարց ևս. 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Երբ Բաքվում ստացվեց Հայհեղկոմի հեռագիրը խորհրդային կարգեր հաստատվելու մասին, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նոյեմբերի 30-ի համատեղ նիստում ընդունվում է որոշում, որի հիման վրա կազմվում է հռչակագիր և հեռագրով հալորդվում Երևան, որն էլ հրապարակվում է այդ օրերին Երևանում տպագրվող «Կոմունիստ» թերթում: Ըստ այդ հռչակագրի, Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Խորհր-

գային Հայաստանի մասեր: Նարիմանովի ստորագրած այդ հռչակագիրը մեկ օր հետո այլ կերպ է հնչում Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում: Ըստ Նարիմանովի. «Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լրիվ իրավունք» (էջ 222): Հեղինակը կատարելով մանրազնին վերլուծություն, հանգում է նրան, որ Բաքվում հենց այդ նույն նոյեմբերի 30-ի գիշերը խեղաթյուրվել է սկզբնաղբյուրը և նահանջել ընդունված որոշումից:

Բերենք մեկ օրինակ ևս. 1923 թ. հուլիսի սկզբին Լեռնային Ղարաբաղին տրվում է ինքնավար մարզի իրավունք, իբրև թե այդ կապակցությամբ մարզում անց է կացվել հանրաքվե և բնակչության ճնշող մեծամասնությունը քվեարկել են մարզը Ադրբեջանի կազմում մնալու օգտին: Հեղինակն անհերքելի փաստերով ապացուցում է, որ Լեռնային Ղարաբաղում ոչ մի հանրաքվե էլ չի եղել, կեղծ արձանագրություններ են կազմվել և ուղարկվել Բաքու: Ասենք նաև, որ այդ փաստաթղթերը լրացվել են բռնություններ գործադրելու միջոցով:

Հետաքրքիր է նաև հետևյալ հարցի պարզաբանումը: Ղարաբաղի հիմնահարցն ավելի բարդացավ այն ժամանակ, երբ 1920թ. մայիսին Ադրբեջանի հեղկոմը 11-րդ կարմիր բանակի զորամասերն ուղարկեց Արցախ և օկուպացրեց այն: Հենց 11-րդ կարմիր բանակը անօրեն բռնագրավեց Արցախ-Ղարաբաղը և այն հայտարարեց Ադրբեջանի տարածք: Այդ առթիվ հետագայում ընդունված որոշումները հաստատեցին կատարվածը: Փաստորեն, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցեց 11-րդ կարմիր բանակը, որի հետ արցախահայությունը չհաշտվեց և ոտքի ելավ Թևան Ստեփանյանի գլխավորությամբ:

Այո՛, Հրանտ Աբրահամյանի մենագրության մեջ նման բազմաթիվ հարցեր մեկնաբանված են նորովի:

Առանձնապես կցանկանայինք խոսել մենագրության մեջ օգտագործված աղբյուրների, գրականության և դրանց տրված մեկնաբանությունների մասին, որոնք կազմում են 58 էջ: Այստեղ ներկայացված են տասնյակ մեկնաբանություններ, համառոտակի տեղեկություններ կան քաղաքական բազմաթիվ գործիչների մասին: Իրոք, մենագրության այս մասը կարելի է անվանել յուրահատուկ հանրագիտարան:

Ի՞նչ ենք ցանկանում: Նախ՝ հրատարակել սույն մենագրությունը ռուսերեն և անգլերեն, հետո՝ անպայման ունենալ տեղանունների և անձնանունների ցանկ: Նաև տեսնել մենագրության մյուս մասերը տպագրված:

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ